

րեսչիք՝ ըստ որում օրհնեցան որդիք Սեթայ եւ անիծան Կայինեանց զաւակք: Սփոփեսչիք՝ զի օրհնեցան Սեմ եւ Յաբեթ եւ անիծաւ Քանան մանուկ: Հանգիցէ բորբոքումն սրտից ձերոց՝ զի սիրեցաւ յԱստուծոյ Յակոբ եւ ատեցաւ Եսաւ ազահ եւ վաճառողն անգրանկութեան: Պաղարեսցէ ամբոխումն յուզման մըտաց ձերոց վասն չարութեանց որդւոց բարի ձերոյն Հեղեայ քահանայի եւ մարգարէին Սամուէլի, որք յորթոյն լաւութեան բարունակաց զփուշ շառաւիղեցին եւ հրապատօք կորեան: Տեւեալ հանդարտեսցէ վրդովմունք մտաց ձեր յիշելով զորդին կորստեան Յուդայ եւ զԴեմաս եւ զԱղեքսանդր դարբինն, որք յետս չօքան առաքելոցն ի Քրիստոսէ եւ գնացեալ սիրեցին զաշխարհ, զունայն կենցաղականս անցաւոր, եւ զրկեցան ի ճշմարիտ կենացն անանցական փառացն: Ըստ այսց եւ Տէրն ասէր. Նման է արքայու թիւն երկնից ուռկանի արկելոյ ի ծով եւ յամենայն ազգ[աց ժողովեւոյ], որ իբրեւ լցաւ՝ հանեալ ի ցամաք եւ նստեալ ժողովեցին զբարին ի բարի յամանս եւ զխոտանն ի բաց ընկեցին. այսպէս եղիցի ի կատարածն աշխարհի, ելցեն հրեշտակք եւ մեկնեսցեն ըզչարս ի միջոյ արդարոց եւ արկցեն զնոսա ի հնոց հրոյ, անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց:

Բայց կրկին լացէ՛ք դուք զայն կրկին կատարածիւ, որ ի լսելն զթօթ դառնութեանս ծնօղն եղկելի վա՛յ գօչելով աղաղակէ եթէ Չորասցի արգանդ իմ որ ծնաւն զնա. եղո՛ւկ էր ժամն այն յորում ասացին թէ Ահա՛ արու: Եւ այն զլալականս առեալ զկնի՝ շրջեսցի ի դաշտ եւ ի մարմանտ. կոծ իբրեւ կրկնամեռի մանկանն մանկամեռի կենդանի մեռելոյ, լեռներով եւ դաշտերով ողբս առեալ դուժին բողոքէ, իբր զխեղազար մորմոքեալ արշաւէ, իբր զսգաւոր սեւազգեաց ձայնս ճչաւորս արձակէ, տուն եւ բնա-